Պարոն/Տիկին Գ. Գևորգյան *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

Տիկին Ն Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան

«10» 10 2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Արմեն Հունանյան,
   - Զարուհի Ստեփանյան,
   - Սիրանուշ Ղարախանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ,
- միջազգային համագործակցության բաժնի պետ,
- ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆունչալ, Մադեիրա, Պորտուգալիա, 2023 թվականի հոկտեմբերի 4-ին:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների ցանց (EaPeReg):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC), Եվրամիջերկրական կարգավորողների խմբի (EMERG), Եվրոպական միության արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների (EaPeReg) և Հեռահաղորդակցության կարգավորողների լատինաամերիկյան ֆորումի (REGULATEL) գագաթնաժողովին, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) և Եվրոպական

միության արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների (EaPeReg) միջև կայացած երկկողմ հանդիպմանը:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Միջոցառման ընթացքում քննարկվել են միջազգային կապի ապահովման կարևորությունը, EaPeReg ցանցի համագործակցությունը BEREC-ի ցանցի հետ, լատինական Ամերիկայի, Եվրոպական միության, Միջերկրածովյան և արևելյան գործընկերության տարածաշրջաններում հեռահաղորդակցության ոլորտի կարգավորման և միջազգային կապի հասանելիության ապահովման առանձնահատկությունները, մասնավորապես՝ անդրծովյան մալուխի և արբանյակային կապի կարևորության մասով: Այս համատեքստում քննարկվել են անդրծովյան մալուխի կիրառումը ֆինանսական, ձեռնարկատիրական և քաղաքական նպատակներով, ինչպես նաև դրա կիրարկման արդյունավետությունը տարածաշրջանի բնակչության համար:

Հարկ է նշել, որ գագաթաժողովի ընթացքում նախատեսվում էր վերոնշյալ տարածաշրջանային հարթակների նախագահողների կողմից համատեղ հռչակագրի ստորագրում՝ հեռահաղորդակցության ոլորտի զարգացմանը վերաբերող նշված հարցերի վերաբերյալ:

Այդուհանդերձ, հռչակագրի նախագծում տեղ էին գտել նաև որոշ քաղաքական ձևակերպումներ, մինչդեռ տվյալ ցանցերն իրենց գործունեության բնույթով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորողների ցանցեր են և հետևաբար հանդիսանում են մասնագիտական հարթակներ:

Այս կապակցությամբ, հռչակագրի մասով հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից նշվել է, որ ելնելով այն հանգամանքից, որ գագաթաժողովն ու հարթակը մասնագիտական են, հանձնաժողովը կողմ է մասնագիտական ձևակերպումներին, սակայն դեմ է հռչակագրում տեղ գտած քաղաքական ձևակերպումներին և նման քաղաքական ձևակերպմամբ հռչակագրի ընդունման պարագայում հայկական կողմը հռչակագրին կմիանա վերապահումով՝ քաղաքական ձևակերպումների մասով՝ անհրաժեշտության դեպքում առաջարկելով ՀՀ ԱԳՆ-ի հետ քննարկումների արդյունքում մշակված ձևակերպումը:

Արդյունքում, խնդրո առարկա հռչակագրի ստորագրման ու ընդունման հարցն օրակարգից հանվեց:

BEREC-ի ցանցի ներկայացուցիչների հետ կայացել է երկկողմ հանդիպում, որի ընթացքում EaPeReg ցանցում գործող կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով, ռոումինգի հարցերով և ռադիոհաճախականությունների հարցերով աշխատանքային խմբերի նախագահողները ներկայացրել են իրենց խմբերի կողմից իրականացվող աշխատանքները և BEREC-ի համապատասխան մասնագետներից ակնկալիքները:

Մասնավորապես, հանձնաժողովը, որպես կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբի համանախագահող և ռոումինգի հարցերով աշխատանքային խմբի նախագահող, ներկայացրել է աշխատանքային խմբերի առաջնահերթությունները և ազգային կարգավորող մարմինների բարձրացրած խնդիրները: Կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբի մասով նշվել է, որ խմբի անդամները կարևորում են BEREC-ի կողմից 2022 թվականին իրականացված «Ազգային կարգավորող մարմինների անկախության ուսումնասիրություն» հաշվետվությունը (հաշվետվությունը հասանելի է https://www.berec.europa.eu/system/files/2023-02/BoR%20%2822%29%20189%20_Report%20on%20NRAs%20Independence.pdf հղումով) և ակնկալում են BEREC-ի կարգավորման շրջանակի հարցերով աշխատանքային խմբի անդամների և փորձագետների աջակցությունը ԵՄ ԱԼԳ անդամ երկրներում համապատասխան ուսումնասիրության իրականացման և ազգային կարգավորող մարմինների անկախության մակարդակի գնահատման մասով: Նշվել է նաև, որ ներկայումս EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ միասին իրականացվում են ԵՄ ԱԼԳ երկրներում և տարածաշրջանում լայնաշերտ ինտերնետ հասանելիության շուկայի վերլուծություն, որի արդյունքների հետագա ուսումնասիրությունն ու քննարկումը BEREC-ի ներկայացուցիչների հետ համատեղ արդյունավետ կլինի ԵՄ ԱԼԳ երկրների ազգային կարգավորող մարմինների համար:

Ռոումինգի հարցերով աշխատանքային խմբի մասով նշվել է, որ ներկայումս Տարածաշրջանային ռոումինգ համաձայնագրի ստորագրումը հետաձգվում է՝ հաշվի առնելով, որ Ուկրաինայի ներկայացուցիչները դեռևս որոշում չեն կայացրել համաձայնագրի ստորագրման նպատակահարության վերաբերյալ, ուստի խմբի շրջանակում ներկայումս քննարկվում են ԵՄ ողջ տարածքում շարժական և ամրակցված ցանցերի ձայնային վերջնավորման առավելագույն վճարները սահմանող կարգավորման հավելվածում ԵՄ վերոնշյալ կարգավորումների համաձայն վերջնավորման վճարներ սահմանած ԵՄ ԱԼԳ երկրներն՝ ըստ վերջիններիս հայցի, ներառելու հարցերը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի (ANACOM) հետ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցանցերի քարտեզագրման և միասնական տեղեկատվական կենտրոնի (SIP) ստեղծման վերաբերյալ տարածաշրջանային աշխատանքային սեմինարին կազմակերպանը առնչվող հարցեր:

Միջոցառման ընթացքում կայացել է նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի (ANACOM) ներկայացուցիչների կողմից լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցանցերի միասնական տեղեկատվական կենտրոնի (SIP) ստեղծման և կառավարման վերաբերյալ ԵՄ աջակցության TAIEX գործիքի շրջանակում համատեղ կազմակերպվող միջոցառման վերաբերյալ կազմակերպչական հարցերը:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Վերոնշյալ հանդիպումների արդյունքում որոշվել է, որ EaPeReg ցանցի ներկայացուցիչները կներկայացնեն BEREC-ի 2023-2024 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքային հանդիպումների՝ իրենց համար հետաքրքրություն ներկայացնող թեմաները, որից հետո կողմերը կքննարկեն EaPeReg ցանցի ներկայացուցիչների և փորձագետների մասնակցությունը վերոնշյալ աշխատանքային հանդիպումներին:

Մի-նույն ժամանակ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի (ANACOM) ներկայացուցիչները պայմանավորվածություն են ձեռք բերել լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցանցերի միասնական տեղեկատվական կենտրոնի (SIP) ստեղծման և կառավարման վերաբերյալ ԵՄ աջակցության TAIEX գործիքի շրջանակում համատեղ կազմակերպվող միջոցառումները անցկացնել փետրվար ամսին Պորտուգալիայում և ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում: Նշված միջոցառումների շրջանակում նախատեսվում է քննարկել նաև շարժական կապի 5G տեխնոլոգիաների համար նախատեսված ռադիոհաճախականությունների տրամադրման սկզբունքները, փորձը՝ ներառյալ մրցույթների իրականացման ու վճարների սահմանման մոտեցումները, ինչպես նաև հեռահաղորդակցության ենթակառուցվածքների համատեղ օգտագործմանն ու ծառայությունների որակի չափանիշներին առնչվող ԵՄ կարգավորումները: Քննարկվել է նաև երկկողմ համագործակցության խորացման՝ փոխըմբռնման հուշագրի կնքման հարցը:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Հաշվի առնելով միջոցառման ընթացքում ներկայացված տեղեկատվությունը և քննարկումների արդյունքները՝ առաջարկում ենք՝

- Շարունակել համագործակցությունը և համատեղ աշխատանքները ԵՄ ԱԼԳ և ԵՄ կարգավորող մարմինների հետ՝ EaPeReg ցանցում գործող աշխատանքային խմբերի շրջանակում հետաքրքրություն ներկայացնող թեմաների մասով փորձի ուսումնասիրության ուղղությամբ և Հայաստանում դրա հետագա ներդրման նպատակով:

- Շարունակել աշխատանքները Պրոտուգալիայի ազգային կարգավորող մարմնի (ANACOM) հետ վերոնշյալ թեմաներով համատեղ սեմինարների կազմակերպման և երկկողմ համագործակցության խորացման մասով:

Գործուղվող ---------- 10.10.2023թ. ---------- Ա.Հունանյան
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 10.10.2023թ. ---------- Հ.Ստեփանյան
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 10.10.2023թ. ---------- Ս.Ղարախանյան
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 726-ԳՔ, 15.08.2023թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Արմեն Հունանյան, հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ

Ձարուհի Ստեփանյան, հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ

Սիրանուշ Ղարախանյան, հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ ՄԱԴԵՅՐԱՅԻ ՖՈՒՆՉԱԼ ՔԱՂԱՔ /ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ/

5. Գործուղման ժամկետները՝ 02.10.2023-05.10.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ճանապարհածախս,գիշերավարձ:

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Ձարուհի Ստեփանյան*	*Արմեն Հունանյան*	*Սիրանուշ Ղարախանյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				

Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	88	88	88	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	37,079.7	37,079.7	37,079.7	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	148,319	148,319	148,319	444.96
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		148.32	148.32	148.32	444.96

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

06.10.2023թ.